

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների տրամադրման կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում (այսուհետ՝ Ակադեմիա) ուսանողական նպաստի փոխհատուցման (լրիվ կամ մասնակի) տրամադրման կարգը, պայմանները, ուսման վճարը մասնակի փոխհատուցող ուսանողական նպաստների չափը:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 8-ի N 1986-Ն և 2005 թվականի սեպտեմբերի 15-ի N 2114-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1183-Ն որոշումը, Ակադեմիայի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

3. Ուսանողական նպաստը փոխհատուցում է (լրիվ կամ մասնակի) ուսանողի ուսման վճարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, Ակադեմիայի ֆինանսական միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. **Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է՝**

1) մեկ ուսումնական տարվա ընթացքում սահմանված ժամկետներում հանձնված (առանց լուծարքային շրջանի) քննությունների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցությային կարգով.

2) օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝

առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական

պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի («Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18-23 տարեկան այն անձինք, որոնց ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են»),

1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

3) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

Առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց, զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսից մինչև ծրագրի ավարտը, իսկ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին ուսանողական նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են 1-ին կուրսի սկզբում և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

5. Հարգելի պատճառով ակադեմիական պարտքերի մարման շրջանում քննություններ (ստուգարքներ) հանձնած ուսանողների նկատմամբ, սահմանված կարգով, կիրառվում են սույն կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետի դրույթները:

6. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետևյալ խմբերին՝

1) մինչև 5 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50 տոկոսի չափով.

2) 5-10 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով.

3) 10-15 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 70 տոկոսի չափով.

4) 15-20 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 80 տոկոսի չափով:

5) 20-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 100 տոկոսի չափով:

7. Ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը յուրաքանչյուր տարի սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

8. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը յուրաքանչյուր տարի բուհին է ներկայացնում մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 10-ը:

9. Բարձրագույն ուսումնական հաստատություններ սահմանված կարգով 1-ին կուրս ընդունված և ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին ընդունելության մրցութային քննությունների արդյունքում համապատասխան միավորի շեմը հաղթահարելու դեպքում ուսանողական նպաստները տրվում են ըստ սույն կարգի 6-րդ կետով սահմանված չափերի և 8-րդ կետով սահմանված ընթացակարգով:

10. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքներում, ինչպես նաև Տավուշի մարզի Բերդի համայնքում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվող ու տվյալ համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունն ավարտած և Հայաստանի Հանրապետության պետական կամ հավատարմագրված ոչ պետական բուհերի համապատասխան ուսուցման ձևերով (առկա, հեռակա) բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով (այդ թվում՝ անընդհատ ու ինտեգրացված կրթական ծրագրերով) ուսանողների հետևյալ խմբերին՝

1) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով գերազանց առաջադիմություն ունեցողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով:

2) անկախ առաջադիմությունից՝ ուսման վճարի 30 տոկոսի չափով:

11. Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի և մասնագիտությունների, բաշխում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստների քանակը, որը տեղափոխվում է կուրսից կուրս:

Ընդունելության կանոններով սահմանված կարգով առաջին կուրս ընդունված ուսանողների ուսանողական նպաստը տրվում է ըստ ընդունելության մրցութի արդյունքների, առավել բարձր մրցութային միավոր հավաքած ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հատկացրած տեղերի հաշվին:

Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով:

Ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:

Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման մրցութային արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերը չլրացնելու դեպքում Ակադեմիայի մանդատային հանձնաժողովի որոշմամբ ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմությամբ և/կամ լուծարքային շրջանում միայն մեկ քննության պարտք ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով:

12. Սույն կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետում նշված ուսանողների համար մրցութային կազմակերպվում է գարնանային քննաշրջանի ավարտից հետո՝ նախորդող ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի համար սահմանված ժամանակահատվածում հանձնած քննությունների և ստուգարքների արդյունքներով՝ միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հիման վրա: Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) հաշվարկվում է Ակադեմիայում գործող գիտելիքների գնահատման սանդղակի կիրառմամբ (հարյուրերորդականի ճշտությամբ):

13. Ըստ առաջադիմության՝ միջին որակական գնահատականը (ՄՈԳ) ձևավորվում է տվյալ մասնագիտության/կրթական ծրագրի ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը:

14. Սույն կարգի 13-րդ կետում նշված ցուցակը մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը ուսումնամեթոդական վարչության պետը ներկայացնում է Ակադեմիայի մանդատային հանձնաժողովի դիտարկմանը և հաստատմանը:

15. Ակադեմիայի մանդատային հանձնաժողովի կազմը հաստատվում է Ակադեմիայի ռեկտորի հրամանով: Մանդատային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ռեկտորը, գիտաուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, գլխավոր հաշվապահը, ուսումնամեթոդական վարչության պետը, վարչական և/կամ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողական խորհրդի նախագահը:

16. Ակադեմիայի մանդատային հանձնաժողովը, ըստ տվյալ մասնագիտության/կրթական ծրագրի, իրականացնում է մրցութային և կազմում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների, ինչպես նաև փոխատեղման մրցութային արդյունքում նպաստի իրավունքից զրկված ուսանողների ցուցակները: Ցուցակների հաստատման համար կազմվում է արձանագրություն, որտեղ պարտադիր կարգով գրանցվում են մանդատային հանձնաժողովի անդամների կողմից արտահայտված կարծիքները: Արձանագրությունը և ուսանողների մրցութային ցուցակը ստորագրվում է մանդատային հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից:

Ակադեմիայի մանդատային հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակները երեք աշխատանքային օրվա ընթացքում հրամանագրվում և փակցվում են հայտարարությունների ցուցատախտակին:

17. Ակադեմիայի ռեկտորի հրամանով ուսման վարձի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների հրամանագրումից հետո ուսանողների այլ ուսումնական հաստատություն փոխադրվելու, ինչպես նաև Ակադեմիայից ազատվելու դեպքերում ազատված ուսանողական նպաստներն այլ ուսանողների չեն տրամադրվում:

18. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների վերաբերյալ բոլոր հրամանների քաղվածքները դրվում են ուսանողների անձնական գործերում:

19. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Ակադեմիան վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է **ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում** հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 30 տոկոսի չափով.

2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին՝ մինչև 23 տարին լրանալը՝ 50 տոկոսի չափով.

3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ 50 տոկոսի չափով.

4) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոսի չափով.

5) երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 30 տոկոսի չափով.

6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ 30 տոկոսի չափով.

7) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ 30 տոկոսի չափով.

8) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 20 տոկոսի չափով.

9) Ակադեմիայում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատող-ուսանողներին, աշխատողների երեխա-ուսանողներին, աշխատողների ընտանիքների անդամներին՝ առնվազն 50 տոկոսի չափով.

10) առանձնահատուկ դեպքերում՝ Ակադեմիայի ռեկտորատի որոշմամբ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

20. Ակադեմիայում ուսման վճարի մասնակի փոխհատուցման մասին դիմումներն ընդունվում են տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Սույն կետում սահմանված ժամկետների ավարտից հետո ներկայացված ուսման վարձի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումները ենթակա չեն քննարկման:

21. Առանձհատուկ դեպքերում՝ Ակադեմիայի ռեկտորատի որոշմամբ ուսման վարձի մասնակի փոխհատուցում կարող է իրականացվել հետազոտողի կրթական ծրագրով սովորողներին:

22. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում առնվազն 50 տոկոսի չափով տրամադրվում է ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ:

Սույն կետում սահմանված կարգով ուսման վարձի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողները՝ սկսած երկրորդ կուրսից:

23. Սույն կարգով, ինչպես նաև այլ իրավական ակտերով սահմանված մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

24. Ակադեմիայի կողմից տրամադրվող ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցումից կարող է օգտվել սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարած ուսանողը:

Միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը սահմանվում է Ակադեմիայի ռեկտորի հրամանով:

Առաջին կուրսի ուսանողները ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած:

25. Պետության կողմից ուսանողական նպաստ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին:

26. Ուսումնառությունն ընդհատած (ժամկետային զինծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ուսանողական նպաստ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում): Այս հանգամանքը պարտադիր նշվում է ուսումնառության ընդհատման վերաբերյալ հրամանում:

Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողի կողմից սույն կետով նախատեսված պատճառներով ուսումնառությունն ընդհատելու դեպքում ազատված ուսանողական նպաստը տվյալ ուսումնական տարում չի օգտագործվում նույն կուրսում և հետագայում ավելացվում է այն կուրսի տվյալ ուսումնական տարվա ուսանողական նպաստներին, որտեղ ուսանողը վերականգնում է իր ուսանողական իրավունքները:

27. Նպաստառու ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում Ակադեմիայի կողմից տրամադրվող ուսանողական նպաստը կարող է փոփոխվել:

28. Ուսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պետական կառավարման լիազորված մարմինը:

3. ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

29. Ակադեմիայի ուսանողներին տրվում է պետական կրթաթոշակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված կարգով և չափով:

30. Ակադեմիան իրավասու է սեփական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին սահմանելու ներբուհական կրթաթոշակներ, այդ թվում՝ անվանական:

Հաստատված է

*Հայաստանի Հանրապետության պետական կառավարման
ակադեմիայի գիտական խորհրդի 2018 թվականի մայիսի 30-ի նիստում
(արձանագրություն N° 6)*